ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ք. Երևան 13.03.2018թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի

թիվ ՍՑ-ԷՍ-2017/78

Հայաստանի Հանրապետության գնումների բողոքարկման խորհրուրդը (այսուհետ՝ նաև Խորհուրդ) ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 20.12.2017թ. թիվ 03/26-3/23870-17 գրությամբ «Էլայզեռ» ՍՊԸ-ին (ՀՎՀՀ 00458742) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված պաշտոնական ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեց հետևյալը.

1. **<u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>**

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ պաշտպանության նախարարության 19.12.2017թ. թիվ ԴՎԱ/4741 գրության հիման վրա, 19.12.2017թ. ՀՀ գնումների բողոքարկման խորհրդում նախաձեռնել է «Էլայզեռ» ՍՊԸ-ին (այսուհետ՝ նաև Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում (այսուհետ՝ նաև Ցուցակ) ներառելու պաշտոնական ընթացակարգ:

ՀՀ ֆինանսների նախարարությունը պատշաճ ծանուցվել է Խորհրդում անցկացվող նիստերի ժամանակացույցի վերաբերյալ, սակայն նախարարության կողմից լիազորված որևէ ներկայացուցիչ չի ներկայացել:

2. **<u>ՀՀ պաշտպանության նախարարության ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>**

ՀՀ պաշտպանության նախարարությունը 19.12.2017թ. թիվ ԴՎԱ/4741 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ հայտնելով հետևյալը.

«Հիմք ընդունելով ՀՀ պաշտպանության նախարարության և «Էլայզեռ» ՍՊԸ-ի միջև 30.03.2017թ. կնքված N ՇՀԱՊՁԲ-7/8-1 ծածկագրով գնման պայմանագրի 3.1.7.1 կետի «բ» ենթակետը՝ ՀՀ պաշտպանության նախարարությունը 2017թ. դեկտեմվբերի 11-ից միակողմանի լուծել է վերը նշված պայմանագիրը՝ 117,032 կգ սերուծքային կարագի մասով»:

Միաժամանակ Պատվիրատուն տեղեկացրել է, որ վերոնշյալ պայմանագրի լուծման վերաբերյալ գրությունը 18.12.2017թ. ուղարկվել է մասնակցի պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեով և նույն օրը հրապարակվել է www.gnumner.am հասցեով ինտերնետային կայքում:

Պաշտոնական ընթացակարգի քննության նպատակով Խորհրդում տեղի ունեցած նիստերին մասնակցում էր Պատվիրատուի լիազորված ներկայացուցիչ Սարգիս Պետրոսյանը:

3. **<u>«Էլայզեռ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>**

«Էլայզեռ» ՍՊԸ-ն 06.02.2018թ. Խորհրդին ուղղված գրությամբ հայտնել է հետևյալը.

«ՀՀ պաշտպանության նախարարության հետ 09.02.2017թ. կնքված N ՇՀԱՊՁԲ-7/8-1 պայմանագրով «Էլայզեռ» ՍՊԸ-ն պարտավորվել է ՀՀ ՊՆ-ին մատակարարել «կարագ սերուծքային» ապրանքատեսակը՝ համաձայն պայմանագրով սահմանված ժամանակացույցի և գնային արժեքի:

Ըստ ժամանակացույցի, «կարագ սերուծքային» ապրանքատեսակի մատակարարումը պետք է սկսվեր 2017թ. ապրիլից: Սակայն ընկրերությունը չի կարողացել սկսել մատակարարումը ապրիլ ամսից, քանի որ ի սկզբանե ՀՀ ՊՆ-ն խախտել է 09.02.2018թ. կնքված N ՇՀԱՊՁԲ-7/8-1 պայմանագրի կարևոր կետերից մեկը, որը վերաբերում է ապրանքի գնին:

Կնքված պայամանագրով նշված ապրանքատեսակի մատակարարումը պետք է իրականացվեր կիլոգրամը 2,076 դրամով, ինչն անհամեմատ ցածր էր շուկայական գնից: ՀՀ ՊՆ համապատասխան պաշտոնատար անձանց կողմից պարտադրվել է մեր ընկերության ներկայացուցչի ստորագրել դիմում, որ իբր ընկերությունը նվազեցրել է պայմանագրով նախատեսված գինը՝ այն սահմանելով մեկ կիլոգրամի համար 2,000 դրամ: Արտադրությունը չդադարեցնելու համար, մեր ընկերության ներկայացուցիչը ստորագրել է այդ դիմումը, ինչի հիման վրա 30.03.2017թ կնքվել է համաձայնագիր:

Նշված քայլով ՀՀ ՊՆ–ն որպես պայմանագրի կողմ, խախտել է N ՇՀԱՊՁԲ-7/8-1 պայմանագրի 9.4 կետը, որի համաձայն՝ արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդ յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրերում կատարել այնպիսի փոփխություններ, որոնք հանգեցնում են գնված ապրանքների ծավալների կամ ձեռք բերվող ապրանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Նշված չափազանց ցածր գնային պայմաններում անգամ ընկերությունը փորձել է կատարել ստանձնած պարտավորությունները և 2017թ. մայիսից մինչև հուլիս ամիսը ներառյալ ՀՀ ՊՆ-ին է մատակարարել պայմանագրով նախատեսված որակին համապատասխանող ապրանքը:

2017թ. մինչ օրս ընկերությունը հայտնվել է «ֆորս-մաժորային» իրավիճակում, որի մասին մեր ընկերությունը պատշաճ ծանուցել է ՀՀ ՊՆ-ին: N ՇՀԱՊՁԲ-7/8-1 պայմանագրի 8-րդ կետը նախատեսել է նման իրավիճակի առաջացումը, և որպես այդպիսին, նշվել է «պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ

կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են (...)պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին»:

Մեր ընկերության համար նման արտակարգ ուժի ազդեցություն է ունեցել ՀՀ ԱԱԾ-ում քննվող քրեական գործով նախաքննական մարմնի կողմից կայացված ակտով՝ որոշմամբ, 2017թ. հուլիսի 20-ին «Էլայզեռ» ՍՊԸ-ի արտադրամասի, սառնարանի և պահեստների դռները կնքելը՝ համապատասխան քննչական գործողություններ կատարելու նպատակով: Նշված սառնարում և պահեստներում առկա են եղել ապրանքի այն խմբաքանակները, որոնք պետք է մատակարարվեին ՀՀ ՊՆ-ին և նշված ակտի հետևանքով «Էլայզեռ» ՍՊԸ-ն չի կարողացել շարունակել արտադրությունը:

Պայմանագրից բխող պարտավորություններ ունենալու մասին մեր ընկերությունը տեղեկացրել է նախաքննական մարմնին և ստացել պատասխան, որ դեռևս հնարավոր չէ վերացնել մեր համար ծագած անհաղթահարելի ուժի ազդեցությունը:

Այդ մասին մեր կողմից պատշաճ կերպով տեղեկացվել է պայմանագրի կողմին՝ ՀՀ պաշտպանության նախարարությանը, որը մեր կողմից 09.08.2017թ. գրավոր ծանուցվել է, միաժամանակ խնդրվել է, որ ժամանակացույցի խախտումների պատճառով պայմանագրի 7.2 կետում նշված տույժերը չկիրառել կամ դադարեցնել դրանց հետագա կիրառումը:

Սակայն ՀՀ պաշտպանության նախարարությունը չի ձեռնարկել համապատասխան միջոցներ, ավելին, իրավունք ունենալով 2017թ. հոկտեմբերի 20-ից հետո միակողմանի լուծելու պայմանագիրը, քանի որ անհաղթահարելի ուժը տևել է 3 ամսից ավելի, չի լուծարել պայմանագիրը, նպատակ ունենալով երկարացնել հետագայում կիրառվող տույժերի չափը այն պայմաններում, երբ գործում է անհաղթահարելի ուժ (ՀՀ ՊՆ պայմանագիրը միակողմանի լուծել է միայն 2017թ. դեկտեմբերին):

Նշենք նաև, որ ՇՀԱՊՁԲ-7/8-1 պայմանագրի էական խախտումներ թույլ է տվել ոչ թե «Էլայզեռ» ՍՊԸ-ն, այլ պայմանագրի կողմ հանդիսացող ՀՀ պաշտպանության նախարարությունը: Կնքված պայմանագրի 3.3 կետը և դրա համապատասխան

ենթակետերը սահմանում են «Վաճառողի»՝ «Էլայզեռ» ՍՊԸ-ի իրավունքները, իսկ 3.3.4 ենթակետի համաձայն՝ «Վաճառողն» իրավունք ունի միակողմանի լուծարել պայմանագիրը, եթե «Գնորդն» էականորեն խախտել է պայմանագիրը, իսկ 3.3.4.1 կետով պայմանագրի խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են ապրանքի համար վճարելու ժամկետները: ՀՀ պաշտպանության նախարարությունը մինչև օրս ընկերության բանկային հաշվեհամարին չի փոխանցել 2017թ. հուլիսին մատակարարված 2,200կգ անհատական և 10,200 կգ սերուցքային կարագի արժեքները և վճարման ժամանակացույցի խախտման համար պայմանագրով նախատեսված տույժերը, ինչի մասին բազմաթիվ անգամ գրավոր կարգով տեղեկացրել ենք ՀՀ պաշտպանության նախարարությանը:

Այս պայմաններում «Էլայզեռ» ՍՊԸ-ն իրեն իրավունք է վերապահում հայտնելու, որ դեռևս 2017թ. սեպտեմբերից միակողմանի դադարեցրել է պայմանագրի կատարումը և իրավունք ունի պահանջելու տույժեր և տուգանքների փոխհատուցումներ ՀՀ պաշտպանության նախարարությունից, վերջինիս անբարեխիղճ գտնվելու հետևանքով ընկերությանը պատճառած վնասների համար:

Վերլուծելով վերը նշված փաստական հանգամանքները, հայտնում ենք, որ «Էլայզեռ» ՍՊԸ-ն կնքված պայմանագրերի 3.17.1 ենթակետի «ա» կետի համաձայն, ՀՀ պաշտպանության նախարարությանը մատակարարել է պատշաճ որակի ապրանք, իսկ «բ» կետով նախատեսված մատակարարման 40 օրից ավելի ժամկետները խախտել է անհաղթահարելի ուժի ազդեցության ներքո, որը մինչ օրս շարունակվում է: Հետևաբար, անհիմն է ՀՀ ֆինանսների նախարարության պահանջը ՀՀ գնումների բողոքարկման խորհրդում «Էլայզեռ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու համար:

Խնդրում եմ՝

1. Մերժել ՀՀ ֆինանսների նախարարության պահանջը ՀՀ գնումների բողոքարկման խորհրդում «Էլայզեռ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու համար:

2.Պարտավորեցնել ՀՀ պաշտպանության նախարարությանը վճարել մատակարարված խմբաքանակների արժեքները և դրանց ուշացնելու համար

պայմանագրով նախատեսված տույժերն ու տուգանքները իր գործողությունների հետևանքով «Էլայզեռ» ՍՊԸ-ին պատճառած վնասների համար»:

Խորհրդում նախաձեռնված պաշտոնական ընթացակարգի քննության նպատակով կայացած նիստերին մասնակցում էին Ընկերության տնօրեն Էդուարդ Խաչատրյանը և լիազորված ներկայացուցիչ Արթուր Չերչինյանը:

4. <u>ՍՑ-ԷՍ-2017/78 պաշտոնական ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը, Խորհրդի հիմնավորումները և եզրահանգումը.</u>

Խորհուրդն ուսումնասիրել է ՀՀ ֆինանսների նախարարության 20.12.2017թ. թիվ 03/26-3/23870-17 գրությունը, ՀՀ պաշտպանության նախարարության 19.12.2017թ. թիվ ԴՎԱ/4741 գրությունը և կից փաստաթղթերը, ՀՀ պաշտպանության նախարարության և «Էլայզեռ» ՍՊԸ-ի միջև 09.02.2017թ. կնքված N ՇՀԱՊՁԲ-7/8-1 ծածկագրով գնման պայմանագիրը, ՀՀ պաշտպանության նախարարության և «Էլայզեռ» ՍՊԸ-ի միջև 09.02.2017թ. կնքված N ՇՀԱՊՁԲ-7/8-1 ծածկագրով գնման պայմանագրի 30.03.2017թ. N1 համաձայնագիրը, ՀՀ ՊՆ ՆՏԱԴ պետի պժկ-ի «Էլայզեռ» ՍՊԸ-ին ուղղված գրությունը.

ՀՀ պաշտպանության նախարարության և «Էլայզեռ» ՍՊԸ-ի միջև 09.02.2017թ. կնքվել է N ՇՀԱՊՁԲ-7/8-1 ծածկագրով գնման պայմանագիր (այսուհետ՝ նաև Պայմանագիր):

Պայմանագրի՝

- 1.1 կետի համաձայն՝ Վաճառողը պարտավորվում է նույն պայմանագրով (այսուհետ՝ Պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով և գնման ժամանակացույցով նախատեսված ժամկետներում (հավելված N2), Գնորդին կամ նրա կոմից որոշված Ստացողին (այսուհետ՝ Ստացող) մատակարարել Պայմանագրի N1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագրով նախատեսված ապրանքներ (այսուհետ՝ Ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել այդ Ապրանքը և վճարել դրա համար (հավելված N3):
- 3.1.7 կետի համաձայն՝ Գնորդն իրավունք ունի միակողմանի լուծել Պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է Պայմանագիրը:

- 3.1.7.1 կետի «բ» ենթակետի համաձայն՝ Վաճառողի կողմից Պայմանագիրը խախտելը էական է համարվում, եթե ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 40 օրից ավելի:
- 8-րդ կետի համաձայն՝ Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:
- 9.4 կետի համաձայն՝ Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա Պայմանագրի անբաժանելի մաս: Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդ յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրերում կատարել այնպիսի փոփխություններ, որոնք հանգեցնում են գնված ապրանքների ծավալների կամ ձեռք բերվող ապրանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայամանգրի Հավելված 1-ով նախատեսված գնման ժամանակացույցի համաձայն՝ Ընկերությունը պարտավորվել է Պատվիրատուին մատակարարել 185,072 կգ կարագ սերուծքային, 2076 ՀՀ դրամ միավորի գնով, ընդ որում, նույն ժամանակացույցով նախատեսվել է, որ ապրանքի մատակարարումը կիրականացվի համապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում՝ կնքվելիք Համաձայնագրով սահմանված ժամկետում:

ՀՀ պաշտպանության նախարարության և «Էլայզեռ» ՍՊԸ-ի միջև 30.03.2017թ. կնքվել է N ՇՀԱՊՁԲ-7/8-1 գնման պայմանագրի թիվ 1 համաձայնագիրը, որի գնման ժամանակացույցով սահմանվել է, որ Ընկերությունը ՀՀ պաշտպանության նախարարությանը պետք է մատակարարի 185,072 կգ կարագ սերուծքային, 2,000 ՀՀ դրամ միավորի գնով, 2017թ. ապրիլից-նոյեմբեր ամիսներին՝ 2,200 կգ յուրաքանչյուր ամիս:

Պայմանագրով նախատեսված՝ վճարման ենթակա ընդհանուր գումարը կազմել է 370,144,000 ՀՀ դրամ:

ՀՀ ՊՆ ԶՈՒ թիկունքի պետ-վարչության պետը Պայմանագրի միակողմանի մասնակի լուծման գործընթաց սկսելու նպատակով 02.11.2017թ. զեկուցագրով հայտնել է ՀՀ ՊՆ ՆՏԱԴ պետի պժկ-ին, որ պայմանագրով նախատեսված 185,072 կգ մատակարարման ենթակա ապրանքից Ընկերության կողմից փաստացի մատակարարվել է 68,040 կգ սերուծքային կարագ:

ՀՀ ՊՆ ՆՏԱԴ պետի պժկ-ին ուղղված 30.11.2017թ. զեկուցագրով ՀՀ ՊՆ ՆՏԱԴ ԹԱ վարչության պետը հայտնել է, որ ՀՀ պաշտպանության նախարարության և «Էլայզեռ» ՍՊԸ-ի միջև 09.02.2017թ. կնքված N ՇՀԱՊՁԲ-7/8-1 ծածկագրով գնման պայմանագրի 30.03.2017թ. N1 համաձայնագրի շրջանակներում Ընկերությունը էականորեն խախտել է սերուծքային կարագի մատակարարման ժամկետները: Հաշվի առնելով վերոգրյալը, վերջինս առաջարկել է 20.10.2017թ. դրությամբ միակողմանի մասնակի լուծել 09.02.2017թ. կնքված N ՇՀԱՊՁԲ-7/8-1 ծածկագրով գնման պայմանագրի 30.03.2017թ. N1 համաձայնագիրը 117,032 կգ մասով, որից հուլիս ամսվա խմբաքանակից՝ 19,960 կգ, և օգոստոս-նոյեմբեր ամիսների ողջ խմբաքանակը՝ 97,072 կգ:

Պատվիրատուն գրությամբ դիմել է «Էլայզեռ» ՍՊԸ-ին՝ տեղեկացնելով, որ, հիմք ընդունելով Պայմանագրի 3.1.7.1 կետերի «բ» ենթակետը՝ ՀՀ պաշտպանության նախարարությունը 2017թ. դեկտեմբերի 11-ից միակողմանի մասնակի լուծել է 09.02.2017թ. կնքված N ՇՀԱՊՁԲ-7/8-1 ծածկագրով գնման պայմանագիրը և դրան կից 30.03.2017թ. N1 համաձայնագիրը 117,032 կգ մասով, որից հուլիս ամսվա խմբաքանակից՝ 19,960 կգ, և օգոստոս-նոյեմբեր ամիսների ողջ խմբաքանակը՝ 97,072 կգ, միաժամանակ առաջարկելով Ընկերությանը նույն ծանուցումը ստանալուց հետո 5 բանկային օրվա

ընթացքում վճարել Պայմանագրով նախատեսված տույժը և պայմանագրի կատարման ապահովումը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 408-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:

Օրենսգրքի 466-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ պայմանագիրը լրիվ կամ մասնակի կատարելուց միակողմանի հրաժարվելու դեպքում, երբ պայմանագրից հրաժարվելը թույլատրվում է օրենքով կամ կողմերի համաձայնությամբ, պայմանագիրը համապատասխանաբար համարվում է լուծված կամ փոփոխված:

Պաշտոնական ընթացակարգի քննության նպատակով կայացած նիստի ժամանակ «Էլայզեռ» ՍՊԸ-ի ներկայացուցիչը նշեց, որ Ընկերությունը 2017թ. մայիսից մինչև հուլիս ամիսը ներառյալ ՀՀ ՊՆ-ին պատշաճ մատակարարել է պայմանագրով նախատեսված որակին համապատասխանող ապրանքը՝ Խորհրդին ներկայացնելով նաև ապրանքի մատակարարման փաստը հավաստող հարկային հաշիվները: Սակայն, ըստ «Էլայզեռ» ՍՊԸ-ի ներկայացուցչի, 2017թ. հետագա մատակարարումների դադարեցման պատճառը Ընկերության «ֆորս-մաժորային» իրավիճակում հայտնվելն է եղել՝ ՀՀ ԱԱԾ-ում քննվող քրեական գործով նախաքննական մարմնի կողմից կայացված որոշմամբ, 2017թ. հուլիսի 20-ին «Էլայզեռ» ՍՊԸ-ի արտադրամասի, սառնարանի և պահեստների դռները կնքվել են՝ համապատասխան քննչական գործողություններ կատարելու նպատակով: Ընդ որում, նշված սառնարում և պահեստներում առկա են եղել ապրանքի այն խմբաքանակները, որոնք Ընկերության կողմից պետք է մատակարարվեին ՀՀ ՊՆ-ին N ՇՀԱՊՁԲ-7/8-1 ծածկագրով գնման պայմանագրի շրջանակներում:

Խորհրդում նախաձեռնված պաշտոնական ընթացակարգի վերաբերյալ որոշում ընդունելու նպատակով Խորհուրդը 23.02.2018թ. հարցում է ներկայացրել ՀՀ ԿԱ ԱԱԾ քննչական վարչության պետին՝ խնդրելով տրամադրել տեղեկատվություն այն մասին, արդյո՞ք Ընկերության կողմից 06.02.2018թ. Խորհրդին ներկայացված գրությամբ հայտնած փաստերը համապատասխանում են իրականությանը, թե՝ ոչ, և եթե այո, ապա

նաև՝ նախաքննություն իրականացնող մարմնի կողմից կայացված որոշմամբ «Էլայզեռ» ՍՊԸ-ի արտադրամասը, սառնարանները և պահեստները կնիքված լինելու ժամկետների վերաբերյալ:

Ի պատասխան Խորհրդի վերը նշված հարցմանը, ՀՀ ԿԱ ԱԱԾ քննչական վարչությունը 05.03.2018թ. թիվ 1099 գրությամբ հայտնել է, որ «Էլայզեռ» ՍՊԸ-ի փաստացի գործունեության հասցեում կատարված խուզարկությունից հետո կնքվել է արտադրամասի սառնարանային խցիկի և պահեստային մասի դռները, որոնք բացվել են 09.02.2018թ.:

Խորհուրդն արձանագրում է, որ ՀՀ պաշտպանության նախարարության և «Էլայզեռ» ՍՊԸ-ի միջև 09.02.2017թ. կնքվել N ՇՀԱՊՁԲ-7/8-1 ծածկագրով գնման պայմանագիրը և դրա շրջանակներում 30.03.2017թ. N1 համաձայնագիրը, սակայն Ընկերությունը չի մատակարարել Պայմանագրով նախատեսված ապրանքը, ինչը հանգեցրել է Պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի մասնակի լուծմանը:

Միաժամանակ, ուսումնասիրելով Պայմանագրի թիվ 2 հավելվածով նախատեսված գնման ժամանակացույցը և Ընկերության կողմից Խորհրդին ներկայացրած՝ ապրանքի մատակարարման փաստը հավաստող փաստաթղթերը, Խորհուրդն արձանագրում է, որ Ընկերության կողմից ապրանքի մատակարարման ժամկետները չեն խախտվել ավելի քան 40 օրով:

Խորհուրդն արձանագրում է նաև, որ ՀՀ ԱԱԾ-ում քննվող քրեական գործով նախաքննական մարմնի կողմից կայացված որոշմամբ 2017թ. հուլիսի 20-ից կնքվել են «Էլայզեռ» ՍՊԸ-ին պատկանող արտադրամասը, սառնարանը և պահեստները, որոնք բացվել են 09.02.2018թ.:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ նաև Օրենք) 5-րդ հոդվածի՝

- 4-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե հայտը ներկայացնելու պահին նախորդող տարվա ընթացքում ավելի քան մեկ անգամ խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորություն, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի

միակողմանի լուծարմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

• 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը պաշտոնական ընթացակարգ է նախաձեռնում գնումների բողոքարկման խորհրդում: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների բողոքարկման խորհուրդը որոշում է կայացնում մասնակցին նույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ:

Այսպիսով, Խորհուրդը գտնում է, որ՝

• «Էլայզեռ» ՍՊԸ-ն օբյեկտիվորեն զրկված է եղել ՀՀ պաշտպանության նախարարության և «Էլայզեռ» ՍՊԸ-ի միջև 30.03.2017թ. կնքված N ՇՀԱՊՁԲ-7/8-1 գնման պայմանագրի թիվ 1 համաձայնագրով նախատեսված՝ 2017թ. հուլիսից-նոյեմբեր ամիսների ապրանքի խմբաքանակների մատակարարումն իրականացնելու հնարավորությունից, քանի որ ՀՀ ԱԱԾ-ում քննվող քրեական գործով նախաքննական մարմնի կողմից կայացված որոշմամբ, 2017թ. հուլիսի 20-ին «Էլայզեռ» ՍՊԸ-ի արտադրամասը, սառնարանը և պահեստները, որտեղ առկա են եղել ապրանքի այն խմբաքանակները, որոնք պետք է մատակարարվեին ՀՀ ՊՆ-ին, կնքվել են համապատասխան քննչական գործողություններ կատարելու նպատակով:

• Ընկերության կողմից պայմանագրային պարտավորությունների մասնակի չկատարելը պայմանավորված է եղել պետական մարմնի կողմից ընդունված համապատասխան որոշմամբ ակտով, որն անհնարին է դարձրել նույն պայմանագրով պարտավորությունների կատարումը և որի գործողությունը շարունակվել է 3 ամսից ավելի: Ուստի, ստեղծված իրավիճակը Ընկերության համար կարող է որակվել որպես Պայմանագրի 8-րդ կետով նախատեսված «ֆորս-մաժորային» իրավիճակ, իսկ ՀՀ ԱԱԾ-ում քննվող քրեական գործով նախաքննական մարմնի կողմից կայացված որոշման գործողությունը՝ անհաղթահարելի ուժի ազդեցություն:

• Պայմանագրի 8-րդ կետի համաձայն՝ Ընկերությունն ազատվում է պայմանագրային պարտավորությունների մասնակիորեն չկատարելու համար պատասխանատվությունից:

• ՀՀ պաշտպանության նախարարությունը հոկտեմբերի 2017թ. հոկտեմբերի 20-ից հետո Պայմանագիրը միակողմանի լուծելու ուղղությամբ համապատասխան միջոցներ չձեռնարկելով՝ գործել է ոչ իրավչափ՝ խախտելով Պայմանագրի 8-րդ կետով նախատեսված պահանջը:

• ՀՀ պաշտպանության նախարարությունը «Էլայզեռ» ՍՊԸ-ի հետ 09.02.2017թ. կնքված N ՇՀԱՊՁԲ-7/8-1 պայմանագիրը նույն պայմանագրի 3.1.7.1 կետի «բ» ենթակետի հիմքով միակողմանի լուծելով՝ գործել է ոչ իրավաչափ, քանի որ Ընկերության կողմից ապրանքի մատակարարման ժամկետները չեն խախտվել ավելի քան 40 օրով:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Խորհուրդը գտնում է, որ «Էլայզեռ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքեր առկա չեն:

Ինչ վերաբերում է մատակարարված խմբաքանակների արժեքները և դրանց ուշացնելու համար պայմանագրով նախատեսված տույժերն ու տուգանքները իր գործողությունների հետևանքով «Էլայզեռ» ՍՊԸ-ին պատճառած վնասների համար ՀՀ պաշտպանության նախարարությանը վճարել պարտավորեցնելու Ընկերության պահանջին, ապա Խորհուրդը գտնում է, որ Պայմանագրի 9.10 կետի համաձայն՝ պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով, իսկ համաձայնություն ձեռք չբերելու դեպքում՝ դատական կարգով:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ մասով, 48-րդ հոդվածի 6-րդ մասի 7-րդ կետով՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց

ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 20.12.2017թ. «Էլայզեռ» ՍՊԸ-ին /ՀՎՀՀ 00458742/ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով Խորհրդում նախաձեռնված պաշտոնական ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

ՀՀ գնումների բողոքարկման
խորհրդի անդամ՝ **ԷՄԻԼ ՍԱՐԳՍՅԱՆ**